

**«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Վաղարշապատ համայնքի ավագանու «Վաղարշապատ համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2023 թվականի որոշումը կատարելու, բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ավելացումը և բյուջեի վարչական մասում առաջացած նախորդ տարվա ընթացքում կատարված, սակայն չֆինանսավորված պարտավորությունները /նախորդ տարվա պարտքերը/ կատարելու համար Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները՝

1. 2022թ. բյուջետային տարին եզրափակելուց հետո 2023թ. հունվարի 1-ի դրությամբ Վաղարշապատ համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 286979.9 հազ. դրամ, որից վարչական մասում՝ 252220.4 հազ. դրամ, ֆոնդային մասում 34759.5 հազ. դրամ:

1.1. Բյուջեի վարչական մասում առաջացել է նախորդ տարվա ընթացքում կատարված, սակայն չֆինանսավորված պարտավորություններ /նախորդ տարվա պարտքեր/ 17320.2 հազ. դրամ:

1.2. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <Էներգետիկ ծառայություններ> հոդվածին /հոդ. 4212/ 2503.8 հազ. դրամ, <Կոմունալ ծառայություն> հոդվածին /հոդ. 4213/ 125.9 հազ. դրամ <Կապի ծառայություն> հոդվածին /հոդ. 4214/ 211.0 հազ. դրամ և <Տրանսպորտային նյութեր> հոդվածին /հոդ. 4264/ 180.0 հազ. դրամ:

1.3. Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <Տրանսպորտային նյութեր> հոդվածին /հոդ. 4264/ 4577.0 հազ. դրամ:

1.4. Փողոցների լուսավորման /բաժին 06, խումբ 4, դաս 1/ <Էներգետիկ ծառայություններ> հոդվածին /հոդ. 4212/ 9299.5 հազ. դրամ:

1.5. Համայնքային զարգացման /բաժին 06, խումբ 2, դաս 1/ <Տրանսպորտային նյութեր> հոդվածին /հոդ. 4264/ 423.0 հազ. դրամ:

1.6. Վարչական մասում նախորդ տարվա պարտքերի մարմանն ուղղելուց հետո տարեսկզբի ազատ մնացորդի տարբերությունը 234900.2 հազ. դրամը տեղափոխել ֆոնդային մաս և 2023թ. վարչական բյուջեի ծախսերը հաստատել 1902842.2 հազ. դրամ:

1.7. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

2. Հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 10.11.2022թ. թիվ 1738-Ն և 15.12.2022թ. թիվ 1962-Ն որոշումներով հաստատված սուբվենցիաների հատկացման 312982.7 հազ. դրամը, վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի տարբերությունը՝ 234900.2 հազ. դրամը, ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի 34759.5 հազ. դրամը, Ֆոնդային մասում ֆինանսական ակտիվների 116000.0 հազ. դրամը, 2023թ. Ֆոնդային մասի ծախսերը հաստատել 698642.4 հազ. դրամ և ուղղել:

2.1. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածը /հոդ. 5113/ 80000.0 հազ. դրամ, <Վարչական սարքավորումներ> հոդվածը /հոդ. 5122/ 15000.0 հազ. դրամ, <Գեոդեզիական ծախսեր> հոդվածը /հոդ. 5133/ 2000.0 հազ. դրամ և <Նախագծահետազոտական ծախսեր> հոդվածը /հոդ. 5134/ 5000.0 հազ. դրամ:

2.2. Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածը /հոդ. 5113/ 376559.0 հազ. դրամ և <Նախագծահետազոտական ծախսեր> հոդվածը /հոդ. 5134/ 4125.0 հազ. դրամ:

2.3. Համայնքային զարգացման /բաժին 06, խումբ 2, դաս 1/ <Վարչական սարքավորումներ> հոդվածը /հոդ. 5122/ 2000.0 հազ. դրամ:

2.4. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <Վարչական սարքավորումներ> հոդվածը /հոդ. 5122/ 2000.0 հազ. դրամ:

2.5. Նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածը /հոդ. 5113/ 209958.4 հազ. դրամ և <Նախագծահետազոտական ծախսեր> հոդվածը /հոդ. 5134/ 2000.0 հազ. դրամ:

2.6. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 166-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները: